

891.99

01-53

89.542.2
57

18 NOV 2311

Մանկանոց շՅՈՒՏԱՆ

ԹԻՔ ԹԱՔ

Ծիծաղաւոր զուես երկու տարուանով

Բիւի վերածեց 1. ԾԻՇԱՂ

Պատրաստուած մանկատնային դպրոցական
հանդեսներու համար

Հրատարակիչ Լ. Ն. ՍԷՄԵՐՃԵԱՆ

Գին 7.50 ՂՐԾ.


ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՆՈՒՐԵԱՆ ՈՐԳԻՔ

Կ. ՊՈԼԻՍ

1920

9746

ԱՆՕՐԻՆԱԿ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ
Անապատների յաջողութիւն
ԱՄԷՆ ԿՈՂՄԷ ԹԷԼԷՖՈՆ ՍԹԱՄՊՈՒՆ 2168
ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԸ
Ե՛ՐԲ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ



Սանքրալի Օրհորդը



Տափսիղորա՛վ Օրհորդը



Բարոնը



Ընտանիքի պատշաճական ուսուցիչը



ԳԻՆ 10 ՂՐՇ.
Կեդրոնական

ՅԱԿՈԲ ԱՐՄԱՀԷԼԵԱՆ

Պապը-Ալի Բեյի եփեհե՛ր իսան

Իսկ հաճոյաւոր պարունը կողի շոգեմարին երբայն աւագ,
ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ կապաւ ժամայոյցը ձեռքին ...

Մատենադար ՀԱՅԱՍՏԱՆ

Թիւ 6

391.99

8 - 53

պր.

Թ Ի Բ Թ Ա Բ

Ծիծաղաւարժ գաւիտէ երկու աւարուած



Բիւտի վերածննդ Լ. ԾԻԾԱՂ

Հրատարակիչ Լ. Ն. ՍԷՄԷՐՃԵԱՆ

ՏԳԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՈՐԴԻՐ

Կ. ՊՈԼԻՍ

1920



9746

ԳՈՐԾՈՂ ԱՆՁՈՆՔ

ԹՕՄԱՍ	56	տարեկան , ճաշարանապետ
ԹԷՐԷԶԱ ,	35	» Թօմասի կինը
ԱՆԹՈՒԱՆ	28	» Գասկահատ
ԺՕԶԷՖ	22	» »
ԱԼԳԷՐ	40	» Բժիշկ
ՕՍԳԱՐ	70	» Լեւոնդերու բժիշկ
ԺԱՔ		Բեռնակիր
ՄԻՇԷԼ		»

ԾԱՆՈԹ.— Ներկայացման իրաւունքը վերապահուած է ամէնուն :

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Ա Ծ

(Բեմը կը ներկայացնէ Թօմասի ճաշարանը: Պարզ սենեակ մը: Ձախ կողմը, պատէն կախուած խոշոր ժամացոյց մը: Աջ կողմը եւ մեջքեղը դրուած են սեղաններ, բոլորսիքը արուներ: Սեղանները զարդարուած են ներմակ սփռոցներով, վրան ջուրի շիշեր, գաւաթներ եւ պնակներ):

ՏԵՍԻԼ Ա.

ԹՕՄԱՍ առանձին

Շիտակը ըսելով ալ չքաշուելիք եղաւ այս կինը, ես, որ այսքան համբերող եմ, կարծեմ չպիտի կրնամ դիմանալ եւ օր մըն ալ պիտի պրոթկամ, ինչ մաքրութիւն որ ընեմ չի հաւնիր, եփած կերակուրներուս անպատճառ բան մը պիտի ըսէ, եկու տես որ երբ ամուսնացանք, կերակուր եւ փելուն ձեռն անգամ չէր գիտեր: Եթէ գալու ըլլայ եւ չարունակէ իր ընթացքը, վերջնակա՜նսպէս իրեն պիտի ազդարարեմ որ, եթէ անգամ մըն ալ իմ գործերուս միջամտելու ըլլայ, օրհնած բերանս պիտի բանամ եւ մէյ մըն ալ չպիտի գտցեմ, եղբայր, եկող յաճախորդներն անգամ դժգոհ են, անոնցմէ ալ չամչնալով կը սիսի բերնին եկածը դուրս տալ: (Կես բարկութեամբ եւ սեղանները մաքրելով): Ծաշարան բանեցնողը սէր, ես ուր, բայց լուսանոցի մեծ

հայրս (ժամացոյցը ցոյց տալով) այս ժամացոյցը հօրս ժառանգ ձգելովը, և հօրմէս ալ ինծի ժառանգ մնալովը կրնամ կոր քիչ թէ չատ ապօրուիլ այս գործով: Գրեթէ եկող յաճախորդներուն ամենքն ալ ժամացոյցին համար են, եկողը անպատճառ ժամացոյցը պիտի դիտէ և սքանչանայ: Կինս մինչեւ անգամ այս ժամացոյցին, որ մեր ապրուստի միջոցն է, «չլխուղ փորձանք մը պիտի բերէ, սա ժամացոյցը ծախէ» կ'ըսէ, բայց ես իրեն պէս խենդ չեմ որ ձեռքէ հանեմ: (Ներսէն ոտքի ձայն կը լսուի) Ոտքի մը ձայն կայ, այս ժամուս յաճախորդ չի կրնար ըլլալ, անպատճառ կինս ըլլալու է:

Տ Ե Ս Ի Լ Բ.

ԹՕՄԱՍ ԵՒ ԹԷՐԷԶԱ

ԹԷՐԷԶԱ.— (Ներս մտնելով եւ երեսին վրայէն փոշի փչելու պէս ընելով) Անմաքրութիւն, անմաքրութիւն և վերջին ծայր անմաքրութիւն: Թօմաս, այս ի՞նչ խայտառակութիւն է:

ԹՕՄԱՍ.— Իրաւունք ունիս, սիրելի կնիկս, մինակ ըլլալուս ասկէ աւելի չեմ կրնար կոր ընել:

ԹԷՐԷԶԱ.— Կնիկս միկն չգիտեմ, ես ամեն բան իր տեղը և մաքուր կ'ուզեմ:

ԹՕՄԱՍ.— Եթէ այդքան մաքրասէր ես, խուչիկս, ինծի հետ դուն ալ աշխատէ, և այն ժամանակ ուզածիդ պէս մաքուր կ'ըլլայ:

ԹԷՐԷԶԱ.— Ի՞նչ, ի՞նչ ըսիր, ե՞ս ալ աշխատեմ, ես ալ քեզի հետ աշխատեմ, հապտ ո՛ւր կը մնայ քու էրիկմարդութիւնդ:

ԹՕՄԱՍ.— Թէրէզա, չես տեսնար կոր պէխս և մօրուքս:

ԹԷՐԷԶԱ.— Պէխ և մօրուք ունեցող կիներ չկան:

ԹՕՄԱՍ.— Բայց անպատճառ էրիկ մարդ ըլլալս հաստատող բան մը պէտք է ցոյց տալ: (Մեկուսի) Այս ի՞նչ փորձանք է, Տէր Աստուած:

ԹԷՐԷԶԱ.— Չեմ գիտեր, ես միայն այն գիտեմ թէ, կիները իրենց տան գործերով կը զբաղին, իսկ այրերը դուրսի:

ԹՕՄԱՍ.— Շատ լաւ, ես ալ իբրեւ այր մարդ դուրսը իմ գործովս կը զբաղիմ կոր, դուն ինչո՞ւ համար հոս գալով իմ գործերուս կը միջամտես, չէ, չեմ ուզեր որ հոս գաս, հասկցա՞ր:

ԹԷՐԷԶԱ.— Հոս գալս չես ուզեր որ դուն քու ուզածիդ պէս գործես և խանութը աղտոտութեան մէջ լուլայ, անկէ ետք ալ բերանդ օդին բռնէ ու սպասէ որ յաճախորդ գայ:

ԹՕՄԱՍ.— Բայց Թէրէզա, պէտք է լաւ գիտնաս որ հոս եկող յաճախորդները ոչ մաքրութեան համար կուգան և ոչ ալ կերակուր ուտելու:

ԹԷՐԷԶԱ.— Կը հասկնամ ինչ ուզելդ, դարձեալ սա ժամացոյցը կ'ախարկես, ախպէս չէ:

ԹՕՄԱՍ.— Ոչ թէ կ'ախարկեմ, այլ ամէն ժամ կ'աղօթեմ Աստուծոյ, որ այս ժամացոյցը անխտանգ պահէ և մեծ հօրս հողին Աստուած լուսաւորէ որ իր որդւոյն և ան ալ ինծի ժառանգ թողուց:

ԹԷՐԷԶԱ.— Թօմաս, իմ հողիս անանկ կը վկայէ թէ այդ ժամացոյցը օր մը չէ օր մը քու գլխուղ մեծ փորձանք մը պիտի բանայ:

ԹՕՄԱՍ.— Դուն քու հողիդ ձայնին կարեւորութիւն մի տար, այս ժամացոյցին երեսէն է որ 4ուկէս տարուան մէջ 15 նարութնոն դուստ չան մը ըրած եմ, 1500 ֆրանք, իմացա՞ր:

ԹԷՐԷԶԱ.— (Խնդալով) Հա', հա', հա', 15 նարութնոն

4-ուկէս տարուան մէջ, ինչ մեծ հարստութիւն:

ԹՕՄԱՍ. — 15 նաբոլէոնին չի հաւնեցած, դուն դրպանը 15 ֆրանք ունիս և կամ հօրմէդ ժօրմէդ 15 ֆրանք մնաց քեզի իբրեւ ժառանգ:

ԹԷՐԷԶԱ. — (Բարկութեամբ) Դո՛ւն, դուն հօրս մօրս անունը բերանդ առնելու արժանի՞ մարդ ես, շուտ բերնէդ դուրս հանէ:

ԹՕՄԱՍ. — (Բերնին մէջ փնտնելով, մեկուսի) Բայց բերնիս մէջ բան չկայ: (Կնկանը) Թէրէզա, նախ սա ըսեմ որ ես քու հօրդ մօրդ անունը բերանս առած չեմ և երկրորդ բերնիս մէջը բան մը չկայ որ դուրս հանեմ:

ԹԷՐԷԶԱ. — Այ հասկցայ որ ես քեզի հետ չպիտի կրնամ ապրիլ, հիմա պիտի երթամ մեծ եղբօրս, ամէն բան պիտի պատմեմ, թող ան ճար մը մտածէ քեմէ ազատելու համար: (Կը մեկնի)

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԹՕՄԱՍ առ աւճիճ

Թէրէզա, Թէրէզա, եկուր, քու ըսածիդ պէս կընեմ, հայրդ մայրդ բերնէս կը հանեմ: Կ'ուզե՞ս որ մեծ եղբայրը գալով գլխուս մեծ փորձանք մը բերէ, սրիկային մէկն է: (Ներս կը մտնեն Անրուան և Ժօզէֆ):

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԹՕՄԱՍ, ԱՆԹՈՒԱՆ ԵՒ ԺՕԶԷՖ

ԱՆԹՈՒԱՆ. — (Ժօզէֆին) Հոգ մի ընե՛ր, եթէ իմ պատուէրներս կէտ առ կէտ գործադրես, մենք հոս փառաւոր ճաշ մը ընելնէս վերջը կ'որիկ գումար մըն ալ առնելով դուրս կ'ելլանք:

ԺՕԶԷՖ. — Ես այդ խօսքերուդ վրայ ամենեւին վստահութիւն չունիմ, եթէ խայտառակութեամբ չի մեկնինք շատ բան:

ԱՆԹՈՒԱՆ. — Հրամայե՛ք պարոններ, հրամայե՛ք: (Երկու փախստականները աչ կողմի սեղանը կը նստին):

ԱՆԹՈՒԱՆ. — (Թօմասին) Թօմաս, բաւական ատեն է որ քու խանութդ չեմ եկած, ինչ ունիս ուտելիք:

ԹՕՄԱՍ. — (Յուցակը երկնցնելով) Հրամայե՛ք պարոն, ամեն բան և շատ համեղ:

ԱՆԹՈՒԱՆ. — Բեր, բեր, հաւու ջուրի ապուր բեր:

ԹՕՄԱՍ. — Հրամանիդ գլխուս վրայ, մէկ թէ երկու:

ԱՆԹՈՒԱՆ. — Հարկաւ երկու, առանձին չեմ որ:

ԹՕՄԱՍ. — Այս վայրկեանիս: (Դուրս կ'ելլայ):

ԺՕԶԷՖ. — Անթուան, շատ բարձրէն մի նետեր, հաւու ջուրի ապուրը ինչ պիտի ըլլայ, անով մարդուն փորը կը կշտանայ:

ԹՕՄԱՍ. — (Ապուրները բերելով) Դրէթէ այս քաղաքին մէջ այս տեսակ համեղ և մաքուր ապուր երբեք չկայ:

ԱՆԹՈՒԱՆ. — Արդէն այդպէս ըլլալը գիտնալովնիս երեք մղոն տեղ քալելով հոս եկանք ճաշելու:

ԹՕՄԱՍ. — (Իեպի դուռը) Ա՛խ, հոս ըլլայի՛ր տէ՛րիմանայի՛ր:

ԱՆԹՈՒԱՆ. — Հաւու միս:

ԹՕՄԱՍ. — Տապկած:

ԱՆԹՈՒԱՆ. — Այո՛, տապկուած:

ԹՕՄԱՍ. — Հիմա հիմա: (Մեկուսի) Ասոնք բաւական հարուստի կը նմանին կոր, կարծեմ լաւ գործ մը պիտի ընեմ ասոնց հետ:

ԱՆԹՈՒԱՆ. — (Ժօզէֆին) Եթէ կերակուրները բերելու ըլլայ, ամենաընտիր տեսակէն գինի ուղէ, առանց վախի:

ԺՕԶԷՖ.— Այդ բանը իմ կարողութենէն վեր է, չի բաւեր առանց դրամի փոքերնիս կշտացնելը, մէյ մըն ալ գինի՞ պիտի խմենք:

ԱՆԹՈՒԱՆ.— Ապուշութիւն պէտք չէ, ես քեզի ինչ որ կ'ըսեմ ան ըրէ:

ԺՕԶԷՖ.— Շատ լաւ:

ԹՕՄԱՍ.— (Երկու պնակ հաւ բերելով) Ահա պարոններ, այս հաւերը ճիշդ եօթը ամիս իմ հաւնոցիս մէջը պահելէս վերջ, այսօր մորթեցի:

ԺՕԶԷՖ.— Այդ ամենքը լաւ, բայց առնք առանց դինի խմել կարելի չէ:

ԹՕՄԱՍ.— Գինի՞ կ'ուզէք, շատ լաւ, բերեմ:

ԺՕԶԷՖ.— Ինծի նայէ, գինիին լաւ տեսակը ունի՞ս:

ԹՕՄԱՍ.— Օ՛հ, խնդրեմ, դիւ կը ծաղրէ՞ք թէ անունս դեռ չէք իմացած, իմ ունեցած գինիս ամենաբնութիւնն է: (Գինի կը բերէ):

ԱՆԹՈՒԱՆ.— (Գինի խմելով) Այո՛, շատ լաւ գինի է, միայն թէ կերակուրները լմնցան, մտեղէն ի՞նչ կերակուր որ ունիս բեր:

ԹՕՄԱՍ.— Շատ լաւ: (Ներս կ'երթայ)

ԱՆԹՈՒԱՆ.— Հիմա քեզի ինչպէս պատմեցի, այնպէս ալ պէտք է ի գործ դնես պատուէրներս:

ԹՕՄԱՍ.— Հրամայեցէք, ձեզի մտեղէն:

ԱՆԹՈՒԱՆ.— Անուշեղէն չունի՞ս:

ԹՕՄԱՍ.— Չունի՞մ, այդ բառը իմ խանութիս մէջ գոյութիւն չունի, դուք միայն ուզեցէք:

ԱՆԹՈՒԱՆ.— Շատ լաւ, անուշեղէն բեր, բայց երկերկու բորսիօն ըլլայ:

ԹՕՄԱՍ.— Ամենայն սիրով: (Ներս կ'երթայ):

ԺՕԶԷՖ.— Մարդը քու ըսածիդ չափ ապուշ կ'երեւայ կոր, բայց համբերութիւնն ալ կարծեմ շատ է, եւ ատով մենք զբաւը պիտի կորսնցնենք:

Եթէ կէս ժամ ընդունի քու առաջարկդ եւ յաղթէ այն ժամանակ ի՞նչ պիտի ընենք:

ԱՆԹՈՒԱՆ.— Օ՛, կ'երեւի Անթուանը չես ճանչնար:

Շատ լաւ, եթէ ժամացոյցին առաջը կենալով իմ ըսածներս ընէ, մենք դուռնէն դուրս պիտի ելլանք բարձրաձայն խնդալով, եթէ ետին դառնայ, զբաւը կորսնցուցած պիտի ըլլայ, իսկ եթէ չդառնայ, մենք արդէն մեր նպատակին հասած եւ ճանկարին զարեջրատունը պիտի դռնենք ինքզինքնիս:

ԺՕԶԷՖ.— Այո՛, այո՛, շատ խելացի կերպով է որ կը խօսիս, ես այդ կէտը չկրցի մտածել:

ԱՆԹՈՒԱՆ.— Ուրեմն գործի:

ԹՕՄԱՍ.— (Երկու պնակ անուշեղէն բերելով) Հրամայեցէք եւ կարծեմ թէ կհամբերնուդ մէջ առաջին անգամն է որ այս տեսակ անուշեղէն պիտի ճաշակէք:

ԱՆԹՈՒԱՆ.— Շատ լաւ, շատ լաւ: (Ժամացոյցը աչիւն զարկած ըլլալ ձեւացնելով) Այդ ի՞նչ է, տես Ժօզէֆ, սա ժամացոյցը տես: Շիտակը ըսելով ես, որ այսքան ժամացոյց տեսած էի ասոր չափ հնութիւն ունեցող ժամացոյց մը դեռ առաջին անգամն է որ կը տեսնամ:

ԹՕՄԱՍ.— Այո՛, հնութիւն մըն է եւ կրնամ ըսել թէ 150 տարի առաջ ալ ասոր հնութիւն մը ըլլալը հաստատող գրութիւն մը կայ ժամացոյցին ետեւի պահարանին մէջ պահուած:

ԱՆԹՈՒԱՆ.— Ըսելու հարկ չկայ, արդէն ինքնին ցոյց կուտայ այդ: (Ընկերոջը) Հիմա ինծի մտիկ ըրէ, եկու քեզի հետ գրաւ մը բռնենք, եթէ ոս ժամացոյցին ոլաքին հետ քառորդ ժամ թիփ թաք ընես, այսօրուան, ոչ թէ հոս կերածնիս, այլ ամբողջ ծախքը ես կ'ընեմ, իսկ եթէ կէս ժամ համբերելու ըլլաս 1000 ֆրանք կուտամ:

ԹՕՄԱՍ.— (Մեկուսի) Այս մարդը խենդ մը ըլլալու է որ այս տեսակ չնչին բանի մը համար 1000 ֆրանք կը տրամադրէ կոր, եթէ ինծի տալու ըլլայ այդ 1000 ֆրանքը, ոչ թէ կէս ժամ, այլ ժամ մը իսկ կը համբերեմ:

ԺՉԶԵՅ.— Շատ լաւ, ես քեզի 1500 ֆրանք կուտամ եթէ դուն ընես այդ թիւը թաքը:

ԹՕՄԱՍ.— (Մեզ մտնելով) Ազնիւ պարոններ, ինչ պէտք կայ այդպէս իրարու հետ վիճաբանելու, եթէ այդ տեսակ դրաւ մը փռնելու բաժնաբոլորունիք տես ես պատրաստ եմ ձեր երկուքին հետ ալ գրաւ բռնելու, ոչ թէ կէս ժամ այլ ժամ մը:

ԱՆԹՈՒԱՆ.— Ինչու չէ, քեզի հետ կը բռնուինք: Հիմա ինծի մտիկ ըրէ, ինչպէս քիչ մը հասկցած ես, աւելի լաւ բացատրեմ: Պէտք է մէկ ժամ առանց ուրիշ տեղ ուշադրութիւնդ դարձնելու ժամացոյցին պաշտին հետ գլուխդ պիտի օրօրես թիւը թաք ըսելով, եթէ ժամ մը համբերութեամբ կատարես այդ, գրաւը չահած կ'ըլլաս և կ'առնես 1500 ֆրանքը, իսկ եթէ այդ մէկ ժամուան մէջ ու եւ չարժուժով չուարիս և կենաս, գրաւը կորսնցուցած կ'ըլլաս և 1500 ֆրանք դուն կուտաս: Կ'ընդունիս:

ԹՕՄԱՍ.— (Առանց մտածելու) Այո՛, կ'ընդունիմ, (Մեզի գրպանէն 15 նաբօլեոն հանելով) Ահա, ձեզի 15 նաբօլեոն, որ չորսուկէս տարուան մէջ աւելցուցած եմ և կը յուսամ թէ մէկ ժամ յետոյ 30 նաբօլեոն պիտի ըլլայ պահեստի դրամս: (Մեկուսի) Ո՛հ, ի՛նչ մեծ շահ մէկ ժամուան մէջ:

ԱՆԹՈՒԱՆ.— Լաւ մտածէ ձաշարանապետ, (Ինք ալ գրպանէն 15 նաբօլեոն հանելով) Ահա ես ալ քու տրամադրութեանդ տակ կը դնեմ 15 նաբօլեոն: (Սեղանին վրայ կը դնէ, նոյնպէս Թօմաս իր ձեռքը գտնուած 15 նաբօլեոն սեղանի վրայ կը դնէ): Հիմա գտնեք պայմաններուն կատարելութեան:

ԺՉԶԵՅ.— (Մեզ մտնելով) Բայց համբերեցէք կարելի է ես մէկուկէս ժամ կ'ընդունիմ:

ԹՕՄԱՍ.— Ո՛հ, պարոն, դուք միջամտելու իրաւունք չունիք, որովհետեւ մենք արդէն գործը վերջացուցինք:

ԱՆԹՈՒԱՆ.— Սպասեցէք, իմ առաջարկած պայմաններս ով որ ընդունի, անոր հետ կը բռնենք գրաւը, այսինքն եթէ քեզ հետ բռնուիմ գրաւի պէտք է գիտնաս թէ այդ մէկ ժամուան մէջ ի՛նչ որ ալ ընենք չպիտի չուարիս գրաւըդ չկորսնցնելու համար:

ԹՕՄԱՍ.— Եղբայր, ես ամէն կերպով կ'ընդունիմ, ինչպէս որ կ'ուզէք:

ԱՆԹՈՒԱՆ.— Լաւ, (Ժամը 8 կը զարնէ) Ահա ժամը 8 կը զարնէ, ուրեմն մինչեւ ժամը 9ը մեր գրաւի ժամն է, ուրեմն սկսէ:

ԹՕՄԱՍ.— (Ուրախութեամբ) Շահեցայ, չահեցայ, 15 նաբօլեոն ժամը 9ին պիտի առնեմ: (Ժամացոյցին առաջին երթալով կը սկսի պախին հետ միասեղ թի'ք թա'ք, թի'ք թա'ք թի'ք թա'ք ընել շարունակ: Անբուան եւ Ժօզէօն ձեռքի շարժումներով իրարու հետ փոխանակեն):

ԱՆԹՈՒԱՆ.— Ալ մենք երթանք, մեր գործը լմնացաւ:

ԹՕՄԱՍ.— (Քիչ մը շուարումով) Թի թի թի ք թա թա թա ք թի թի թի ք թա թա թա ք թի ք թա ք:

ԱՆԹՈՒԱՆ.— (Սեղանին վրայի գրամները ժողովելով. որոնց նայնք պէտք է ելլայ): Օն ուրեմն երթանք:

ԹՕՄԱՍ.— (Դրամներուն նայնք առնելով) Թի թի ք թա թա ք թի թի ք թա թա ք (Անբուան եւ Ժօզէօն խնդալով կ'երթան):

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Բեմը կը ներկայացնէ Առաջին արարուածը, ոչ մէկ
սարքերու քիւն):

ՏԵՍԻԼ Ա.

ԹՕՄԱՍ (Առանձին)

(Ժամացոյցին առջեւ կեցած) Թի՛ք թա՛ք,
թի՛ք թա՛ք: (Շարունակ առանց կենալու,
միայն անհամբերութեան շարժումներ կ'ընէ):

ՏԵՍԻԼ Բ.

ԹՕՄԱՍ ԵՒ ԹԷՐԷԶԱ

ԹԷՐԷԶԱ.— (Մտնելով) Մարդ որչափ ապուշ ըլլալու է
որ իր ամուսնոյն հետ ունեցած վէճը ուրիշին
պատմէ, բայց եթէ այդչափ ալ վախ չտամ,
բոյրութիւն կ'առնէ կը քայլէ: (Սեղանը տեսնե-
լով) Օ՛ հօ՛, այս ի՞նչ աղտոտութիւն: Բայց
ինչո՞ւ այս վիճակին մէջ ձգելով դուրս ելեր
է: (Ներս երթալու համար դէպի ձախ դառնա-
լով եւ Թօմասը տեսնելով ժամացոյցին առջեւ,
որ քիֆ քաֆ կը շարունակէ: Խնդալով) Այս
էր պակաս, ժամացոյցին հնութիւն մըն է ը-
սելով, քսելով, ինք ալ անոր կարգը անցնել
կ'ուզէ կոր: Թօմաս, Թօմաս, այդ ի՞նչ խայ-
տառակութիւն է... Թօմաս ինչո՞ւ չես պա-
տասխաներ կոր: (Թօմաս կը շարունակէ քիֆ

քաֆը): Բայց տէր Աստուած, չըլլայ թէ խել-
քին եկած ըլլայ, երթամ բժիշկ կանչեմ, Թօ-
մաս, Թօմաս: Ո՛չ, ո՛չ, խենդեցեր է, առանց
բժիշկի բան մը չեմ կրնար ընել: (Սերքայ):
ԹՕՄԱՍ.— (Առանձին) Թի՛ք թա՛ք, թի՛ք թա՛ք:
(Այսպէս երկու վայրկեան):

ՏԵՍԻԼ Գ.

ԹՕՄԱՍ, ԹԷՐԷԶԱ ԵՒ ԱԼՊԷՐ

ԹԷՐԷԶԱ.— Խնդրեմ պարոն բժիշկ, հաճեցէք, ներս
եկէք և տեսէք թէ ինչ է եղեր Թօմասը:
ԱԼՊԷՐ.— (Առանց տեսնելու Թօմասը) Փո՞րը կը ցաւի
թէ գլուխը:
ԹԷՐԷԶԱ.— Կ'արծեմ ուղեղը, պ. Տօքթօր:
ԱԼՊԷՐ.— Ոտքերը տաք ջուրը դնելու է, ամբողջ
տաքութիւնը վար կ'իջնէ և կազատի:
ԹԷՐԷԶԱ.— Ո՛չ Տօքթօր, Թօմասին ցաւը տաք ջուրով
անցնելիք ցաւ չէ, տեսէք:
ԱԼՊԷՐ.— (Թօմասը տեսնելով եւ սոսկալով) Օ՛, օ՛,
այս շատ առտարոց բան է, Մ. Թօմաս ի՞նչ
հաճոյք կը զգաս այդպէս թիք թաք ընելով:
ԹՕՄԱՍ.— Թիք թաք, թիք թաք, թիք թաք:
ԱԼՊԷՐ.— Հասկցայ, հասկցայ, ուղեղային տկարութիւն
ունի, որը ես անկարող եմ դարձանելու: (Մեր
դրացի Տօքթօր Օսքարը, որ խենդերու բժիշկ
է, անիկա կանչեցէք):
ԹԷՐԷԶԱ.— Խնդրեմ, պարոն բժիշկ, դուք հոս քիչ մը
սպասեցէք, ես հիմա ան ալ կը կանչեմ:
ԱԼՊԷՐ.— Օ՛, ոչ տիկին, չեմ կրնար սպասել, ժամը
Յուլիէսին ուրիշ տեղ ժամադրութիւն ունիմ և
որովհետեւ հիմա ժամը Յին տասը կ'ուզէ, ուշ
կը մնամ, ներողութիւն:

ԹԷՐԷՉԱ. — Բայց Վստահ եղէք թէ երկու վայրկեանէն կուգամ:

ԱԼՊԷՌ. — Շատ լաւ, չուտ գացէք: (Թերեզա կը մեկնի: Դեպի Քօմասը յառաջանալով եւ ժամացոյցին նայելով) Շիտակը ըսելով, կեանքիս մէջ առաջին անգամն է որ այս տեսակ խենդ մը կը տեսնամ:

ԹՕՄԱՍ. — Թի՛ք թա՛ք, թի՛ք թա՛ք:

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ԹԷՐԷՉԱ ԵՒ ՕՍՔԱՐ

ՕՍՔԱՐ. — Եթէ կարեւոր հիւանդ մը ունիք կրնամ նայիլ:

ԹԷՐԷՉԱ. — Այո՛, պ. բժիշկ, կարեւոր է, տես, ամուսինիս նայեցէք, խելքին է դպեր:

ՕՍՔԱՐ. — (Քօմասը տեսնելով ժամացոյցին առջեւը, որ շարունակ թիֆ բաֆ կ'ընէ, ինքն ալ անոր հետ կը սկսի թիֆ բաֆ ընել): Հա՛, հասկցայ, չնչին բան մըն է, պէտք է պաղ ջուրով լողանք ընել տալ: Աճապարէ, գնա մեր տունը, ըսէ ժաքի եւ Միշէլի որ գան իրենց հետ բերելով խենդերը կապելու համար մասնաւոր հաստ պարսնը:

ԹԷՐԷՉԱ. — Շատ լաւ հիմա կ'երթամ: (Կ'երթայ):

ՕՍՔԱՐ. — Այս տեսակ հիւանդութիւններէ չէք հասկնար պարոն բժիշկ:

ԱԼՊԷՌ. — Ո՛չ, չեմ հաւկնար եւ հասկնալ ալ չեմ ուզեր, որովհետեւ ատկէ անախորժ բաներ ալ կը պատահին:

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ԹԷՐԷՉԱ, ԺԱՔ ԵՒ ՄԻՇԷԼ

ԹԷՐԷՉԱ. — Ահաւասիկ եկան:

ՕՍՔԱՐ. — Ժաք, Միշէլ, պատրաստուեցէք, սա ժամացոյցին առաջը կեցող մարդը կապելով ուղղակի հիւանդանոց տարէք եւ պաղ ջուրի մէջ լողանք ընել տուէք:

ԺԱՔ ԵՒ ՄԻՇԷԼ. — (Միարեւան) Հրամաններդ զլիւսաւ վրայ:

ԱԼՊԷՌ. — Ինծի հրաման տուէք, Տիկին, ժամը 9ն է:

ԹՕՄԱՍ. — (Յոգնած) Թի՛ք թա՛ք: (Դառնալով սեղանին) Վերջապէս: Ահա ժամը 9 կը դարնէ, 15 նարօլէնը շահեցայ տուէք: Բայց ուր են այն պարոնները որոնց հետ զրաւ բռնուեցայ:

ԹԷՐԷՉԱ. — Ի՞նչ պարոն, ի՞նչ զրաւ:

ԹՕՄԱՍ. — Բայց ժամ մը առաջ, երկու պարոններ եկան, ինծի հետ զրաւ բռնեցին այս ժամացոյցին սլաքին հետ ժամ մը թիք թաք ընելու համար, որուն փոխարէն 1500 ֆրանք տուած էի անոնց:

ՕՍՔԱՐ. — Մ. Քօմասը, ուրախ եղիր որ այդ զրաւը մէկ ժամուան համար բռնեք էք, եթէ մէկուկէս ժամուան համար ըլլար, հիմա ինքզինքնիդ հիւանդանոցին մէջ, խենդերու բաժնին տեղը պիտի դնայիք, եւ պէտք է դիտնաք թէ ձեզ պէս շատեր կան հոն:

ԱԼՊԷՌ. — Ծնորհիւ քեզի պէս խելացի բժիշկներուն:

ՎԱՐԱԳՈՅՐ

ԳՐԱՏՈՒՆ Հ. ԱՇՃԵԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1868

ԿԵԴՐՈՒՆ.— Կ. Պօլիս, Չաքմաքճըլար թիւ 29—64
ՄԱՍՆԱՃԻԻՂ.— Բերայի Նւքսէք Քալաբըրմ թիւ 548
Կը վաճառուին հին և նոր հրատարակութիւններ
գեղջեալ գիներով:

1921 տարուան գրացուցակը փափափողներուն ձրի

ՏՕՔԹ. ԱՏՈՄ ՈՒՐԵԱՆ


Նախկին օգն. վիւարոյժ Ազգ. Հիւանդանոցի
Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Վեներայի, արտալին եւ կանանց նկատարութիւններու
Կալաթա, Թրամվայ ճառագէսի 164 թիւ Մէյմար խան
Ա. յարկ թիւ 3—4—9

ԹԻՒԲ ԹԱՒԻ կեղբոնատեղի Աշճեան գրատուն
Գին 7ուկէս զըշ.



ԱՐՍԷՆ ԼԷԻԲԵՆԻ ՆՈՐ ԱՐՎԱԾԱԼԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ՄՕՐԻՍ ԼԸ ՊԼԱՆ


Ա. ԲԱԷՆ ԼԻՐԷՆ

ՏՈՒՆԵՐՈՒ

ՃԷՆԹԼՄԷՆ

ԿՈՂՈՊՏԻԶԸ

Թրգ. ԵՐ. ՕՏԵԱ՝



Մարդ մը փռուած էր գետին, զոտիք փաթրուած շաւ քանկէր մեխազոյ՝
լարի մը մէջ, դասակները կանգուած քառակ տանկերով:

“ԱՄԵՐԻԿԱ”

“ՌԻԿԿԱՆՈՒ”



“ՌԻԿԿԱՆՈՒ”

ՋԱՇԱՐԱՆ

ԲԵՐԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱԿ

ՋԱՇԱՐԱՆ

ԳԱՐԵՋՐԱՏՈՒՆԸ



Նշանաւոր է մանաւանդ

ԳՈՅՆԶԴՈՅՆ

ՕԹԵԱԿՆԵՐՈՎ

Անքերի սպասարկութեամբ

Ղեկավարութեամբ Ծանօթ Սեղանաշարդար

Ա. ԱՏՈՍԿ

Հայաստանի Ազգային գրադարան



NL0438324

35217